

ՅՈՎՀՇՆՆԷՍ ՓԵՅՆ ԳՈՐԾՈՒՄԺԵԸՆ
ՎԵՐՋԻՆ ՀՇՅՈՂԳԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԼԻՐՇՆԵՆԻ
(1858—1933)

Երբ 1830ին Սուլթան Մահմուտ առանձին հրովարտակով Կաթողիկէ Հայոց ուրոյն հաւաքական Համայնք մը կազմելու իրաւունքը կը ճանչնար՝ Կ. Պոլսոյ մէջ մէկէ աւելի հայ կաթ. պնդուական գերդաստաններ, արքունի բարձր պաշտօնեաներ, ամիրայական աներ և հարուստ գրամատէրներ գոյութիւն ունէին: Բացի յայտնի անուններէ, ինչպէս Տիւղանք, Ալլահօվէրանք, Թընկըրանք, Տաւուտանք¹ ևն, կային նաև անունի վաճառական և սեղանաւոր ընտանիքներ, որոնք կաթ. Հայոց Համայնքին մէջ աչքառու դիրք գրաւած և վարչական պաշտօններու մէջ առաջին կարգի վրայ կը գրանուէին: Այս վերջիններուն կը վերաբերէր նաև Գուլումբեան ընտանիքը, որուն ներկայացուցիչ՝ Պետրոս Գուլումբեան կը յիշուի Հայ կաթ. Համայնքին ընտրած առաջին Երեսփոխաններու շարքին մէջ:

Թէ ինչպէս եղած է այս ընտանիքի ծագումը հնագոյն ժամանակներու մէջ՝ մեզի անձանօթ է: Առ այժմ ստիպուած ենք դո՛ւրջլայ այս գերդաստանի նախահայր ճանչնալով յիշեալ Պետրոս Գուլումբեանը:

Գուլումբեան գերդաստանի ծագումը Գաղատիայէն է²: Ե՛րբ Պոլիս եկած են՝ յայտնի չէ: Պետրոս Գուլումբեանի անունն կը հանդիպինք հայտատու թրքերէն հին արձանագրի մը մէջ, ուր կաթ. եկեղեցւոյ նուիրատուութեան մասին խօսք կ'ըլլայ. անունը յիշուած է սա ձևով. Գուլումբեան Պետրոս Վէլէտի խիւտավերտի³, այսինքն՝ Գուլումբեան Պետրոս՝ որդի Աստուածատուրի: Նոյն անունը երկրորդ անգամ սա ձևի մէջ յիշուած կը գտնենք. խիւտավերտի Պետրոս

¹ Ուրախութեամբ կրնանք ծանուցանել որ մեր մէկ յօդուածին մէջ անձանօթ մնացած կէտ մը (Համդէն Ամսօրնայ, 1949, էջ 55—57) կարող ենք այսօր լուրջ պահել: Կարապետ Արքիմ ֓աշա Տաւուտանի կայրն է՝ Յովսէփ Տաւուտեան (տե՛ս է. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Գերեզմանատուն կաթ. Հայոց Կ. Պոլսոյ, Վրեննա 1931, էջ 252), որմէ յայտնի կ'ըլլայ թէ ինքը կրկին անուն ունէր, Կարապետ Արքիմ (Յարութիւն): Յովսէփ Տաւուտեան մեռած է 1858ին (Մէնմ. Հավատիս, Թ. 230):
² Աւետիք, Բէյրութ 1933, էջ 143:
³ է. Սահակ Վ. Սրապեան, Ս. Յակոբ Ազգային Հիւանդանոց, Վրեննա 1915, էջ 15:

ալա՛: Տարակոյս չունինք թէ երկու տեղերու մէջ յիշուածն ալ նոյն անձն է: Ինչպէս կը տեսնուի սակայն երկրորդ տեղիքէն՝ խիւտավերտի կրնայ նաև իրրեւ ընտանիքի մականուն կամ նախնեաց տիտղոս աւնուիլ:

Պետրոս խիւտավերտի՝ 1830ին Պոլսոյ Ֆէնէս թաղը գումարուած Հայ կաթ. Համայնքին առաջին ժողովքէն ընտրուած 10 Երեսփոխաններէն երրորդն է⁴: Ինքը և իր կինը վախճանած են 1857 դեկտեմբերին և թաղուած՝ Ս. Յակոբի գերեզմանատունը (Սրապեան, անդ, էջ 445):

Հաւանօրէն իր որդին է Յովհաննէս Գուլումբեան, որ կը յիշուի 1838 Փետր. 2ին հայ կաթ. երկրորդ նախագահի ընտրութեան արձանագիրն ստորագրողներու ցանկին մէջ⁵: Յովհաննէս Գուլումբեան իրրեւ սեղանաւոր և վաճառական գիրքի տէր և անունի էր: Հանրային խնդիրներու մէջ իրրեւ խորհրդատու՝ ժողովքներու մասնակցած է⁶:

Բուսփորի նեղուցին վրայ երթեկեկութիւն ընելու համար 1851ին վերջերը չորս շողեւաւ ազգայրուած էր Անդղիայէն: Այդ շողեւաւներու ընկերութեան վերատեսուչ կ'անունուի Յովհ. Գուլումբեան, իրեն օգնական տրուելով Շարլ Լաֆոնտէն իր գործակալ, իսկ Գըլճեան նաւապետը իր վերակացու⁸: Գուլումբեանի անհատական մեծ արժանիքները զինքը բարձրացուցած են յետոյ նոյն իսկ Ֆէսխանէի վերատեսուչութեան պետական բարձր պաշտօնին⁹, որմէ կը տեսնուի թէ որքան մեծ անուն կը վայելէր թուրք կայսերական պետութեան առջև:

Յովհաննէս Գուլումբեան ունեցած է նաև ազգային-վարչական գործունէութիւն:

1840ական թուականներուն Հայ կաթ. ազգ. վարչական կազմին մէջ Գերագոյն Ժողով մը կար, որ կը կոչուէր «Երկոտասանից Ժողով»: Այս ժողովքին անդամները՝ Երեսփոխաններէ գումարուած Ընդհ. Ազգ. Ժողովքի մէջ քուէարկութեամբ կ'ընտրուէին: Իրենց նախագահն էր Պատրիարքը: Ժողովքը ունէր իր յատուկ կնիքը, առանց որուն

⁴ Յ. Ասկիբեան, Հասունեան քաղաքականութիւն, Տիփլիս 1868, էջ 23:
⁵ Ասկիբեան, անդ:
⁶ Անդ՝ էջ 42:
⁷ Արշալոյս Արարատեան, Չմիտնիա 1851, Թ. 385:
⁸ Անդ՝ Թ. 400:
⁹ Մէնմ. Ալթայր, Կ. Պ. 1899, Թ. 3652:

պատրիարքական գրերն անգամ պաշտօնական հանդամանք չէին կրնար ունենալ¹⁰:

Արդ, 1849 Սեպտեմբերին գումարուած Հայ կաթ. Ազգ. Ընդհ. Ժողովքը քուէարկութեամբ հետեւեալ անձերը կ'ընտրէր իրրեւ անգամ Երկոտասանից Ժողովին.

- 1. Տիւղեան Միհրան Պէյ,
- 2. Ալլահօվէրտի Արրահամ Ամիրայ,
- 3. Թընկըր Յովհաննէս,
- 4. Սըլճը Վիշէն,
- 5. Կէօչէք Յարութիւն,
- 6. Խուլումբեան Յովհաննէս,
- 7. Սինապեան (Յրան) Պէյ,
- 8. Սինապեան Գասպար Պէյ,
- 9. Տէօրլէթ Ֆէյրատ,
- 10. Հասունեան Մուսա,
- 11. Կէօչէք Թովմա,
- 12. Մանիշլեան Յարութիւն¹¹:

Ինչպէս կը տեսնուի՝ Խուլումբեան կամ Գուլումբեան Յովհաննէս ճրդ անդամն է Երկոտասանից Ժողովին: Ժամանակակից անձին տուած վկայութիւնը՝ գրուածք մ'է այդ ընտրեալներու բարեմասնութեանց. «Այս ժամանակ իրաւցնէ մեր Ազգին համար ոսկեղէն դար սեպուցաւ... նորընտիր Երկոտասանից մեծագոյն մասը արք երեւելիք, խաղաղաբէր և Տէրութեան իսկ ծախօք և պաշտօնատարք, իրենց ընտանիքը, առուտուրը, հողը և ամէն գործքը մոռացած՝ Ազգին օգուտը միայն կը մտածէին¹²»:

1852ին հայ կաթ. Պատրիարքի ընտրութեան համար խորհրդակցական Ժողովքի մ'առթիւ Ժողովականաց համերաշխ միարանութիւնը տեսնելով՝ Յովհ. Գուլումբեան ուրախութեամբ կը բացազանչէր. «Ալլահ պեր, քարար պիր¹³»:

Գժրախտարար ծանօթ տխուր դէպքեր եկան յետոյ խանդարել հայ կաթ. Համայնքին այս ազգաչէն համերաշխ գործունէութիւնը: Յովհ. Գուլումբեան՝ մնալով մինչև 1855 անգամ Երկոտասանից Ժողովին՝ եղած է գաղափարակից Հասունեան կողմին¹⁴:

Ինչպէս իր ծնունդը՝ նոյնպէս ալ իր մահուան թուականը կը մնայ մեզ անձանօթ:

Թընկըրեան Յովհաննէս Ենիքէօյի մէջ 1866ին եկեղեցի մը շինած է, ուր է նաև իր

¹⁰ Տե՛ս Յ. Ասկիբեան, անդ՝ էջ 94—95:
¹¹ Անդ՝ էջ 121—122:
¹² Անդ՝ էջ 122. տես նաև էջ 123—124:
¹³ Մալիս, Կ. Պ. 1852, Թ. 34:
¹⁴ Յ. Ասկիբեան, անդ՝ էջ 148, 225—226, 270 և 361:

գերդաստանի դամբարանը: Այդ եկեղեցւոյ հողը սակայն Յովհաննէս Գուլումբեան նուիրած է՝ պարտէզին մէջ ունենալով իր գերդաստանին համար յատուկ գերեզմանատեղի (Տօքթ. Վախրամ Յ. Թորգոմեան, Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեան Ստամպոլոյ պատմութիւն, Բ., Վրեննա 1932, էջ 704): Մէնմ. Հավատիս (1866, Թ. 652), որ նոյն եկեղեցւոյ շինութեան վրայ կը խօսի՝ Գուլումբեանի պարագան չի յիշեր:

Յովհ. Գուլումբեան և իր ընտանիքը անշուշտ Ենիքէօյի յիշեալ վայրը թաղուած են:



Պետրոս Գուլումբեան

Իր որդին է Պետրոս Գուլումբեան, որուն կեանքի և գործի մասին ունինք հետեւեալ տեղեկութիւնները:

«Մանուկ հասակէն ուսման մեծ փափազ ունենալով՝ ձեռք կը ձգէ լայն պաշար մասնագիտական ուսումներու, որով կարող կ'ըլլայ կանուխէն մուտք գործել պետական ծառայութեան մէջ, ուր իր իմաստուն և տաղանդաւոր կարողութեամբ աստիճանարար բարձրանալով՝ կը հասնի մինչև պալայի պատուոյ աստիճանին¹⁵»:

¹⁵ Մէնմ. Ալթայր. 1899, Թ. 3652:

1868ին Պեա. Խորհուրդի Անդամ անուանուած է, ինչպէս կը գրէ հայ թերթ մը. «Շուրայի աշխատակցութեան կոչուած պետութեան խորհրդոյն անդամ անուանուեցան հետեւեալ ոչ-մասնատական երեւելի անձինքը. Թընկերան Յովհաննէս էֆ., Մարտիկան Պողոս Պէյ, Գրիգոր Օտեան էֆ., Գուլումեան Պետրոս էֆ. ... առաջին կարգի երկրորդ աստիճանի պաշտօնատարութեամբ¹⁶»։ Գուլումեան այս պաշտօնը վարած է մինչև 1874¹⁷։ Նոյն պատուոյ պաշտօնին կոչուած է յետոյ երկրորդ անգամ 1893ին¹⁸։

1878ի առնները իրեն կը յանձնուի անտաներու եւ հանքերու վերատեսչութիւնը, զոր կը վարէ աւելի քան 20 տարիներ¹⁹, ստանալով Բ. կարգի Օսմանեան նշան եւ Ա. կարգի Մէճիտիէ աստիճան²⁰։

Բացի յիշեալ պետական պաշտօններէն՝ Պետրոս Գուլումեան վարած է նաև զանազան Յանձնաժողովներու նախագահութիւնը. եղած է անգամ առևտրական տան։ Իր գործունէութեանց մէջ ցոյց տուած է արտակարգ ուշիմութիւն ու մասնագիտական կարողութիւն, հիացում ազգելով բոլորին։

Փորթուզալ Փաշայի մահէն վերջ (1897) կայսեր անձնական գանձուն նախարարի թեկնածու համարուած է²¹։

Առևտրական գեանի վրայ իր անձնական գործն եղած է մեծաքսի առուտուրը (Իրէք սարբաֆը)²²։

Ազգային հասարակական գործունէութեան մէջ կարեւոր դեր ինկած է Պետրոս Գուլումեանի։ Հասունեան վարչութեան վերջին տասնամեակի շրջանին Հասունի persona grataն ըլլալով՝ Ս. Սեդրեատրոսի պատուոյ նշանին արժանացած է²³։ Իր ուղղութիւնն եղած է սակայն հայ կաթ. ներքին ինդիւստրիան մէջ խաղաղարարի դեր կատարել²⁴։

1869ին երբ Թրանսայի Էօթէնի կայսրութիւն Պոլիս պիտի այցելէր՝ Հասունեան Պատ-

րիւրք արթուն գտնուելով՝ նախապէս անոր կը զրկէ հայ կաթ. Համայնքի ամէնէն աչքառու դէմքերէն մին — Պետրոս Գուլումեան — ասոր միջոցաւ ինդիւստրիալ կայսրութիւնն որ երբ Պոլիս գայ՝ Կիրակի օրուան պատարագը Հայ Կաթողիկէներու եկեղեցւոյն մէջ տեսնէ։ Գուլումեան կայսրութիւնն խոստումը կ'ընդունի։ Կայսրութիւնն Պոլիս հասնելէ վերջ՝ Հայ. Կաթողիկէներու Բերայի Ս. Աստուածածին եկեղեցին երթալով՝ Հասունեանի 22 հայ կաթ. Եպիսկոպոսներու ներկայութեամբ մատուցած հանդիսական պատարագին ներկայ կ'ըլլայ։ Այս դէպքը մեծ յաջողութիւն մը համարուած է Հայ Կաթողիկէներու համար²⁵։

1889ին Գուլումեան հայ կաթ. Պատրիարքարանի Վարչական Ժողովի անդամ է, ըլլալով միւսներէն առին Բանկալիի Ս. Յակոբ Անկելանոցի Հոգարարձու²⁶։ Չինքը միշտ մասնակից կը գտնենք հայ հանրային կեանքը շօշափող գործառնութիւններու²⁷։

Տիկին Պետրոս Գուլումեան եւս բերած է իր մասնակցութիւնը հայ կաթողիկէ հանրային գործերու մէջ։ Ս. Յակոբ Անկելանոցի Հոգարարձուութիւնը կազմած էր Անկելանոցի Կանանց Խնամակալութիւն մը։ 1906 Օգոստոսին Ազգ. Վարչութիւնը Խնամակալութիւնը կը կազմէ հետեւեալ անձերէ.

- Տիկին Պետրոս էֆ. Գուլումեան Գահերէց,
- Տիկին Օննիկ Պէկ Մըսրըլը,
- Տիկին Անտոն էֆ. Ազարեան,
- Տիկին Յ. էֆ. Պիլէգիկեան,
- Տիկին Գրիգոր էֆ. Սինապեան (Հ. Սահակ Վ. Սրապեան, Ս. Յակոբ Ազգային Հիւանդանոց, Վիեննա 1915, էջ 341—342)։

Պետրոս Գուլումեան կը գովուի նաև իրրեւ օրինակելի ամուսին եւ ընտանիքի հայր։ Ամուսնացած է Հալէպցի Մարոնիտ Հավա անունով ընտանիքի մը աղջկան հետ, որմէ ունեցած է 3 մանչ եւ 2 աղջիկ, որոնց անդրանիկն է Յովհաննէս Փաշա Գուլումեան, Լիբանանի վերջին հայազգի Կառավարիչը։ Պետրոս Գուլումեանի մահը տեղի ունեցած է Եփեսոս, իր ծովափնեայ ամա-

¹⁶ Սթ. Արարատ. 1868, Թ. 830: — Հմմտ. Փուլմը, Կ. Պ. 1868, Թ. 140:
¹⁷ Հմմտ. Փուլմը, 1874, Թ. 873:
¹⁸ Մաղիկ, Կ. Պ. 1893, էջ 187:
¹⁹ Մէնս. Ալիպար, անդ:
²⁰ Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Հ., Կ. Պ. 1898, էջ 197:
²¹ Բիւզանդիոն, Կ. Պ. 1912, Թ. 4731:
²² Ուսումնարան, Կ. Պ. 1913, էջ 2:
²³ Յ. Ասկէրեան, անդ. էջ 465:
²⁴ Հմմտ. Փուլմը, 1874, Թ. 873:
²⁵ Տե՛ս Հ. Միլաս Խորիխան, Ժամանակակից պատմութիւն, Վենետիկ 1907, էջ 222 ծանօթ.։
²⁶ Ընդ. Օրացոյց Ս. Փ. Հ., 1889, էջ 163—164:
²⁷ Մաղիկ, 1887, էջ 98: — Նոյն՝ 1888, էջ 1106: — Նոյն՝ 1899, էջ 3: — Մէնս. Ալիպար, 1889, Թ. 1355 և ն.։

րանոցին մէջ, 1899ին։ Մէնս. Ալիպար կը գրէ այդ առթիւ. «Մեր Ազգը, Գուլումեան Պետրոսի մշտնջենական կորուստով շատ մեծ վնասի ենթարկուեցաւ²⁸»։

Գուլումեան Պետրոս ազգային բարերար մ'էր²⁹։

Յովհաննէս Փաշա Գուլումեան որդի Պետրոս Գուլումեանի՝ ծնած է Պոլիս 1858 Դեկտ. 8ին։ Իր նախնական ուսումը առած է տան մէջ, ազնուականներուն սովորութեան



Յովհաննէս Փաշա Գուլումեան

համաձայն. յետոյ գիշերօթիկ աշակերտ եղած Բանկալիի Վիեննական Միլիթարեանց Վարժարանի մէջ։ Անդրագոյն զարգացման համար այցելած է Պարիս 1872—1877 եւ փնայած Յիսուսեաններու Vaugirardի հոշակաւոր հաստատութեան մէջ։ Վերագարձին մտած է թուրք պետական ծառայութեան մէջ եւ արագօրէն յառաջացած՝ հասնելով մինչև միւլիբրուքեան բարձրագոյն պատուոյն,

Նախ եղած է արտաքին գործոց Նախարարութեան օգնական իրաւագէտ-խորհրդական³⁰, ստանալով Մէճիտիէ Գ. կարգի պա-

²⁸ 1899, Թ. 3652:
²⁹ Ուսումնարան, անդ:
³⁰ Ընդ. Օրացոյց, 1891, էջ 158:

տուանչանը, քիչ յետոյ ալ Իւլայի Բ. աստիճանը³¹։

1899—1908 վարած է Հոսմի Օսման. դեսպանատան Ա. Բարտուղարի եւ երկու անգամ ալ Chargé d'affaires ի փափուկ պաշտօնները³², պատուուելով Օսման. Գ. եւ Մէճիտիէ Բ. կարգի նշաններով։

1908ին Պոլիս դառնալով՝ եղած է Պետակ. Խորհրդոյ Անդամ³³։

1909ին կը կոչուի Արտաքին Գործոց Նախարարութեան Ենթա-քարտուղարի (Sous-Secrétaire d'Etat) բարձր պաշտօնին։ Այս կապակցութեամբ 1910 Յուլ. 15ին Բեզգիտ մեկնելով՝ Սուլթանէն նուիրուած «Սանետանը ալ՝ Օսման» պատուանշանը կը յանձնէ Ալլերա թագաւորին, որ ի պատիւ իրեն արքայական պալատին մէջ ճաշկերոյթ մը կուտայ եւ այս առիթով կը նուիրէ «Լէոբրտ» պատուանշանի Ա. աստիճանը³⁴։ Այս պաշտօնը մինչև 1913 մեծ ձեռնհասութեամբ վարած է Օսմ. Տէրութեան ամէնէն տաղնապալի օրերուն։

1912 Դեկտ. 11ին (ն. տ.) կ'անուանուի Լիբանանի Կառավարիչ։ Այս մասին Պոլսոյ Բիւզանդիոն թերթը կը գրէ. «Նախարարաց Խորհուրդին վերջին նիստերէն մէկին մէջ նկատի առնուեցան Լիբանանու պաշտպան տէրութեանց զիմունները կառավարիչին անուանման մասին։ Բ. Գուլը Լիբանանի կառավարիչ կարգեց Արտ. գործոց խորհրդական Գուլումեան Յովհաննէս պէյը, որուն անուանումն ընդունեցին ու վաւերացուցին պաշտպան տէրութիւնները։ Ըստ սովորութեան վէճերութեան աստիճան պիտի տրուի Գուլումեան Յովհաննէս պէյի։ Մօտերս պիտի ստորագրուի նաև Լիբանանի վարչութեան եւ կառավարիչին անուանման մասին պատրաստուած բրոթօքօլը³⁵»։

Գուլումեանի անուանումը միաձայնութեամբ ընդունուած է մեծ տէրութեանց կողմէ։

Սուլթանին ներկայանալով՝ շնորհակալութիւն կը մատուցանէ միւլիբրուքեան եւ Մէնիտիէ Ա. աստիճանի համար³⁶։ Քիչ յե-

³¹ Մաղիկ, 1892, էջ 452:
³² Ընդ. Օրացոյց, 1901, էջ 374: — Նոյն՝ 1907, էջ 378: — Աւետիք, 1933, էջ 143:
³³ Հմմտ. Ուսումնարան, անդ: — Աւետիք, անդ:
³⁴ Մէնս. Ալիպար, 1910, Թ. 4735: — Թեղիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1911, էջ 402:
³⁵ Բիւզանդիոն, 1912, Թ. 4904:
³⁶ Անդ. Թ. 4918:

տոյ կը յանձնուի նաեւ միւշիբուսեան աստիճանի բարձրացման իրատէն:

Ասիկէ առաջ Լիբանանի կառավարչին առնուանով արձանագիրը առանձին օրինակներով դեսպաններուն կը զրկուէր ու կը ստորագրուէր, սակայն Լիբանանի վարչութեան մէջ փոփոխութիւններ եղած ըլլալով՝ 1912ին դեսպանները միասին մէկ գրութեան վրայ կը ստորագրեն³⁷:

Լիբանանցիները յատուկ Յիշատակագրով զանազան պահանջները ըրած էին. օրինակ՝ Մահմանդութեան մէջ ինչ ինչ փոփոխութիւն մտցնելու, երկրին հեռադրական ու թղթատարական հասոյթները Լիբանանի վարչութեան թողլու, եւ այլն: Թուրք պետութիւնը մասամբ ընդունելով այդ պահանջները՝ մասնաւոր արձանագիր մը կը կազմէ, զոր կը ստորագրեն թէ՛ թուրք պետութիւնը եւ թէ՛ հինգ մեծ պետութեանց դեսպանները³⁸:

Մեծամեծներու հրաժեշտի ողջոյնը տալի վերջ՝ Յովհաննէս Փաշա իր տիկնոջ հետ 1913 Յունուար 17ին (ն. տ.) Մեսսաթրոնի Տենեգալ շոգեհաւով ճամբայ կ'ըլլէ դէպի նոր պաշտօնատեղին: Ողջերթի դացած էին. Պետական պաշտօնատարներ, Հոյանդայի դեսպանն ու Ա. Թարգմանը՝ Մ. Կարապետեան, Յրանսայի դեսպանատան խորհրդականն ու Ա. Թարգմանը, Բեղզիոյ դեսպանատան Ա. Թարգմանը եւ ուրիշներ³⁹:

Լիբանանի մէջ մեծ պատիւներով կը դիմաւորուի⁴⁰:

Քաղաքական խառնակ շրջանի մը մէջ էր որ Գուլումեան Փաշա պաշտօնի կ'անցնէր: Թուրք պետութիւնը Բալկաններու հետ պատերազմական վիճակի մէջ կը գտնուէր: Շշուկներ կային նաեւ համաշխարհային պատերազմի մը մօտալուտ պայթումին, որ շատ ալ չուշացաւ: Այնպէս որ իր կառավարչութեան մօտ 3 տարուան շրջանին աւելի հոգերով ու նեղութիւններով ծանրաբեռնուած գտաւ ինքզինքը Գուլումեան Փաշա: Առաջին տարիէն սկսած յաճախակի ներքին փոքր խռովութիւններ գրեթէ անպակաս էին: Անգամ մը ինքն իսկ մահափորձի ենթարկուե-

37 Անդ՝ Թ. 4914:
38 Անդ՝ Թ. 4915:
39 Անդ՝ 1913, Թ. 4937:
40 Անդ՝ Թ. 4949:

ցաւ, որմէ բարեբախտարար անջնաս ազատեցաւ⁴¹:

Առանձնաշնորհեալ երկրին ամէնէն տկար կողմը տնտեսական աղքատութիւնն էր, որուն պատճառաւ ներքին ոստիկան-գինուորութեան կազմակերպութիւնն ալ չափազանց թոյլ էր: Թէեւ Յովհաննէս Փաշա այդ կազմակերպութիւնը Յրանսայի գնդապետի մը յանձնած էր, սակայն Ի՞նչ կրնար ընել ան իր ձեռքին տակ միայն 800 ոստիկան-գինուոր ունենալով 110 քրլով. է աւելի լեռնոտ եւ գրեթէ անմատչելի տարածութեան մը հսկողութեան համար: Թէպէտ երկակողմանի համաձայնութեամբ Լիբանանի կառավարութիւնը իրաւունք ունէր ոստիկան-գինուորներու թիւը 1200ի բարձրացնելու, սակայն հասոյթներու նուազութեան պատճառաւ անկարող էր այդքան գինուոր պահել⁴²: Այս եւ նման դժուարութիւններ հաւանական է որ պատճառ եղած ըլլան իր հրաժարականին, ինչպէս կը ծանուցանէր 1914ին La Turquie թերթը, որ սակայն չէ ընդունուած⁴³:

Պատերազմի շրջանին իր կառավարած երկիրն ալ բազմաթիւ զոհեր տուած ըլլալով՝ Լիբանանի մէջ ալ Կարմիր Մահիկի ճիւղ մը կը կազմակերպուի իր պատուակալ նախագահութեամբ⁴⁴:

1915 Յունիսին արձակուրդի շրջանը Պոլլիս կ'անցնէ⁴⁵: Իսկ նոյն տարւոյ վերջերը Բ. Գուլումը ջնջած ըլլալով Լիբանանի առանձնաշնորհեալ կառավարչութիւնը՝ Յովհաննէս Փաշա Պոլլիս կը վերադառնայ եւ ձեռակոյտի անգամ կ'անուանուի: Չուզելով սակայն ջարդարար կառավարութեան մը մասնակցիլ՝ կը մերժէ այդ պաշտօնը եւ կը քաշուի Հոռոմ, ուր 1933 Օգոստ. 11ին 75 տարեկան հասակի մէջ կը կնքէ իր կեանքը:

Իտալական թերթ մը այս առթիւ գովեստով կը խօսի՝ զրուատելով իր «Դիւանագէտի, մտածողի, արուեստագէտի ազնուական դէմք»ը, ինչպէս նաեւ «իբ համոզումներու մաքրութիւնը, իր հաւատքի խորութիւնը (վասն զի հայ էր)»⁴⁶:

Գուլումեան Փաշա ամուսնացած էր հայ կաթողիկէ անուանի գերզաստանի մը, Կէօշէ

41 Անդ՝ Թ. 5134, 5136:
42 Անդ՝ Թ. 5143:
43 Անդ՝ Թ. 5552:
44 Անդ՝ Թ. 5583:
45 Անդ՝ Թ. 5690:
46 Աւետիք, անդ՝ էջ 142:

Օղլուի Պերնուի անունով աղջկան հետ, որ եղած է «տիպար մը Հայ Ազնուական Տիկնանց»⁴⁷: Չաւակ ունեցած ըլլալը չի յիշուիր:

Յովհաննէս Փաշա Գուլումեանի պետական բազմաթիւ պաշտօններու մէջ ունեցած մշտատեւ ծանր գրադուսները արդէլք չեն եղած իր մասնակցութիւնը բերելու ինչ ինչ ազգային գործերու:

1887ին հայ կաթ. հասարակութեան Ս. Յակոբի ձրիավարժ դպրոցին նպաստելու համար պարահանգէս մը կը կազմակերպուի Յանձնախումբէ մը, որուն նախագահն է Արիստակէս Ազարեան, գեր-նախագահը Կարապետ Խումարեան, դանձապետը Յովհ. Ազարեան, իսկ քարտուղարը՝ Յովհ. պէյ Գուլումեան⁴⁸:

Գուլումեան եղած է ազգ. Երեսփոխան եւ միշտ մասնակցած բարեկատակ հանդանակութիւններու⁴⁹:

Գաւառի հայ կարօտեալներու օգնութեան համար կազմուած Յանձնախումբի անգամ է եւ ժիր գործունեայ⁵⁰:

Պոլսոյ վիեննական Հարց Նախկին Սաներու Միութեան անդամ էր. Լիբանանի կառավարիչ անուանուելուն առթիւ Միութիւնը զինքը Պատուոյ Նախագահ կ'ընտրէ, իսկ ինքը «կը խոստանայ ձեռքէն եկած օժանդակութիւնը չզրկանալ իր ընկերակցաց թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս»⁵¹:

2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ԱՐՏԱԽԱՉԳ ԱՐՔԵՊ. ՍԵԻՐՄԷՏԱՆ, Մայր Յուցակ կայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր համալսարան: Ա. հատոր, Փարիզ 1950, մեծ 8⁰, էջ 90:

«Եւրոպայի մասնաւոր հաւաքումներ» կ'անուանէ ցուցակագիրը այն մասնաւորները որոնց ձեռագիրները ցուցակագրած է հատորիս մէջ: Ասոնք են. 1. Jean Pozzi (Թ. 5, 11, 13, 25): 2. Ա. Աշեան (Թ. 2, 3, 7): 3. Վարդ Կիւլպէնկեան (Թ. 4, 28): 4. Նուրհան Ֆրէնկեան (Թ. 30, 32): 5. Յ. Ինձէեան (Թ. 6): 6. Պետրոս Քէչիշեան (Թ. 14): 7. Ռաֆայէլ Մարկոսեան (Թ. 17): 8. Յովհ. Պոսթանեան (Թ. 19): 9. Յակոբ Գալլպեան (Թ. 20): 10. Տիկին Տատուրօֆ (Թ. 34): Ասոնք կը գտնուին Պարիս: 11. Միրզայեան Ընտանիքի Մարտէյլ (Թ. 31, 33): Անձանթ են Թ. 9, 15, 22 եւ 27 ձեռագիրներու տէրերը: Մանչեստրի Rylandի Մատենագարանէն են Թ. 35—38: Իսկ Յարութիւն Հազարեան (Թ. 1, 18, 21, 29) եւ Գառնիկ Գէորգեան (Թ. 8, 10, 12, 16, 23) Նիւ Եորք կը բնակին, բայց Պարիս ձեռք բերած են ձեռագիրները. ուստի այդ 9 ձեռագիրներու տէրերը չեն կրնար նկատուիլ «Եւրոպայի մասնաւորներ»: Նոյնպէս Թ. 24ը (Մանրուս-մուսք) ստացիչը՝ Պր. Գարագոշ Նուրբաճ է Երեւանի Մատենագարանին եւ Թ. 26 (Կանոնագիրք) Հալկպցի Քէհեայեան ընտանիքը ընծայած է Անթիլիասի Մատենագարանին: Թէ Ryland Մատենագարանը «մասնաւորներու» շարքին կարելի է դասել, կը մնայ խնդրական: Նոյն Մատենագարանին մէջ կան ուրիշներ ալ, զորոնք ցուցակագրած են Ս. Պարոնեան եւ Յ. Կոնիբեր, դժբախտարար այս ցուցակը տակաւին չէ հրատարակուած:

Մենք շնորհակալութիւն կը պարտինք Սրբազանին որ այս 38 ձեռագիրներու ցուցակագրութիւնը մատչելի կ'ընէ մեզի. շնորհակալութիւն նաեւ Տիար Գ. Կիւլպէնկեանի, որ մեկինս հանդիսացած է Յուցակիս տպագրութեան:

Այստեղ ունինք 4 Սաղմոսարան, 20 Աւետարան, 5 Ծարակնոց, 1 Մաշտոց, 2 Ժամագիրք, 1 Մանրուսմուսք, 1 Պահպանակ, 1 Մեկն. Պատարագի Ն. Լամբրոնացոյ, 1 Խրատագիրք Յովհ. Ոսկերեանը եւ 1 Հաւատարմատ Վարդան Այգեկցոյ: Ասոնց մէջ հնութեամբ յարգի են Թ. 5 եւ 22 Աւետարանները, Թ. 23 Ժամագիրքը գրուած Ստեփ. Վահկացիէ Լեւոն Բ. Թագաւորի համար (1275⁰), Թ. 25 Ն. Լամբրոնացոյ Ատենարանութիւնն եւ Խորհրդածութիւնը (1616էն), Թ. 31 Վարդան Այգեկցոյ Հաւաքումն դաւանարանական վկայութեանց. եւ «Խրատագիրք» Յովհ. Ոսկերեանի, որուն բովանդակութիւնն տալ ժրատ գտնուած է ցուցակագիրը:

Թ. 12 Աւետարանին գրչութեան ժամանակը կը նշանակուի հարցակալով մը «ՓԵՆ»

47 Անդ՝ էջ 143:
48 Հայրենիք, Կ. Պ. 1887, Թ. 2214:
49 ՄԷՏՄ. Այսպար, 1908, Թ. 4614:
50 Անդ՝ Թ. 4615:
51 Ուսումնարան, անդ՝ էջ 2: